քական ընաւորութիւն։ Այսուհետեւ բացառապէս հայ ժողովրդից էր կախուած պատերազմի վախճանը։ Անդրկովկասեան իշխանութիւնը ո՛չ միայն չէր նպաստում պատերազմին, այլ և իր վարանոտ ու հակասական քայլերով ու ներքին հակամարտութիւններով աւելի ևս թուլացնում էր ճակատի պաշտպանութեան գործը։ Թիֆլիսում տիրող բարքերն ու միջազգային բախումները, մանաւանդ, սաստիկ ազդում էին բանակի կազմութեան ու տրամադրութեան վրա։ Հայերը՝ Թիֆլիսում ու գաւառներում պահանջում էին յայտարարել նոր զօրակոչ, մինչ Անդրկ. Կոմիսարիատը, մահմեդական անդամների ճնշման տակ և վրացիների յեղյեղուկ դիրքի պատճառով, ձգձգում էր։ Բանը հասաւ այնտեղ, որ հայկական շրջանների մի քանի ազգային խորհուրդներ ստիպւած եղան յայտարարել տեղական զօրահաւաք, որ ահագին իրարանցում ու դժգոհութիւն առաջ բերեց Թիֆլիսում։ Եւ միայն հայերի ստիպումով, անվերջ ու ջղայնացնող յետաձգումներից և երկու ամիս զինուորական յանձնախմբում պահելուց յետոյ, շատ ուշ, մարտ 24-ին Սէյմը ընդունեց զօրահաւաքի օրինագիծը, որով զինուորական նախարարութեան իրաւունք էր տրւում զէնքի տակ առնել, առաջին հերթին, մինչև 28 տարեկան զինապարտները, իսկ յետոյ, ի հարկին, նաև մինչև 32 տարեկանները։

Մարտ 2-ին Հայկական Կորպուսի հրամանատար զօր. Նազարբէգեանը նշանակւեց ճակատի հրամանատար՝ Օլթիից մինչև Մակու ընկած տարածութեան վրա։ Օլթի-Բաթում գիծը պէտք է պաշտպանէին վրացիները։ Հայ և վրացական ճակատների հրամանատարութիւնը կենտրոնացւեց զօր. Լեբեդինսկիի ձեռքը։

Զօր. Նազարբէգեանի տրամադրութեան տակ կար, միջին հաշւով, 36 գումարտակ զօրք, թերի կազմերով — մօտ 15,000 զինւոր, որով պէտք է դրաւէր աւելի քան 250 կիլոմետր երկարութիւն ունեցող ռազմաճակատ և պահպանէր թիկունքը։

Հայկական ճակատի դէմ, համաձայն հետախուզական տեղեկութիւնների, գործում էին հետեւեալ թիւրքական ուժերը. 5րդ, 11րդ և 36րդ դիվիզիաները Էրզրում-Սարըղամիշ շրջանում, 1 դիվիզիա Ալաշկերտում և 1 դիվիզիա Վանի լճի շուրջը։ Թէ թւով և թէ, մանաւանդ, կազմակերպութեամբ ու ներքին կորովի տեսակէտից թիւրք բանակը աւելի բարձր էր, քան հայկականը։

Բայց և այնպէս, հայերը ցոյց տւին ուժեղ դիմադրութիւն։ Կարաուրդանից այս կողմ թիւրքերը իւրաքանչիւր թիզ հողը գրաւում էին կուով և զոհեր տալով։

Ընդհարումները սկսւեցին մարտի առաջին կէսերին՝ Կարա-Ուրդանի շրջանից։ Թիւրքական գործողութիւնների հետ մէկտեղ գլուխ բարձրացրին և քրդերը թիկունքում, մանաւանդ երկաթուղու շրջանում։ Մարտ 10-ին, թիւրքերի ճնշող դրոհի տակ՝ հայ զօրքերը քաշւեցին դէպի Խան-Դերէ։ Մարտ 20-ին թիւրքերը, մօտ 6 գումարտակով, լայն տարածութեամբ, շարժւեցին դէպի Կարաքուրտ, Բարդուս և այս կէտերը գրաւելուց յետոյ,